

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կահույքի ձեռքբերման
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.02.2019 թ. ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/

Վ. Ավետիսյանը

Ս. Փայասյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/

Մ. Նիկոլյանը

1. Ընդունելի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փուտի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 31.01.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի 29.01.2019-31.01.2019թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝

Դամկար ՍՊԸ՝ 1,3,8,9,11,14,27 չափաբաժիններով,

Սեմանգ ՍՊԸ՝ 2,4,5,10,13,22 չափաբաժիններով,

Ֆոտոն ՍՊԸ՝ 6,7,12,23,24,26,28 չափաբաժիններով,

ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ՝ 15 չափաբաժնով,

Սմարթլայն ՍՊԸ՝ 16 չափաբաժնով,

Արգավանդ Կահույք ՍՊԸ՝ 17,18,19,20,21,25 չափաբաժիններով՝ ընկերություններից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ 05.02.2019թ., Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական տեղեկատվություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված փաստաթղթերը eauction.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և ընտրված մասնակիցներ ճանաչել.





Դամկար ՍՊԸ՝ 1,3,8,9,11,14,27, Սեմանգ ՍՊԸ՝ 2,4,5,10,13,22, Ֆոտոն ՍՊԸ՝ 6,7,12,23,24,26,28, ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ՝ 15, Սմարթլայն ՍՊԸ՝ 16 և Արգավանդ Կահույք ՍՊԸ՝ 17,18,19,20,21,25 չափաբաժիններով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝		Հ. Սարգսյան
անդամներ՝		Վ. Ավետիսյան
		Ս. Փայասյան
քարտուղար՝		Մ. Նիկոլյան